ՀՀ Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի և դպրության օրվա առթիվ

01.09.2024

Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, մանկավարժներ, ծնողներ, կրթության ոլորտի նվիրյալներ, շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ:

Մեր հասարակության մեջ գիտելիքի և ուսման նկատմամբ սերը առանցքային դեր ու նշանակություն ունի: Գիտելիքը ցանկացած գործունեության, մասնագիտության հիմքն է, իսկ ժամանակակից աշխարհում՝ հասարակության զարգացման ու բարեկեցության հիմքն է:

Այս ամենն առավել ևս կարևորվում է հիմա, երբ նոր ու արժեք ստեղծող, բանիմաց անհատը դառնում է հասարակության շարժիչ ուժը:

Այս տոնական օրը ևս մեկ առիթ է խորհելու ժամանակակից աշխարհում մեր տեղի ու դերի մասին, հասկանալու, որ կարող ենք առաջավոր ու զարգացած պետություն դառնալ միայն գիտելիքի ուժի ու հնարավորությունների շնորհիվ:

Այսօր առանձնահատուկ շնորհավորում եմ առաջին դասարանցիների դպրոցամուտը՝ մաղթելով հետաքրքիր ուսումնական տարիներ, բարձր առաջադիմություն, իսկ ուսուցիչներին՝ մասնագիտական հաջողություններ: Հարգելի՛ մանկավարժներ, համոզված եմ՝ ջանք ու եռանդ չեք խնայելու՝ մեր երեխաների համար ուսումնառության տարիները գիտելիքի կուտակման ու նոր բացահայտումների ժամանակաշրջան դարձնելու համար:

Կրկին շնորհավորում եմ Գիտելիքի ու դպրության օրվա կապակցությամբ՝ մաղթելով հաջողություններ, արդյունավետ ուսումնական տարի՝ խաղաղ երկնքի տակ: